**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 մարտի 2020 թվական N19
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի N3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 17-ի N3 արտահերթ նիստի օրակարգը՝
1) Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի վարչական շենքի վերանորոգման ծրագրի արժեքի համաֆինանսավորմանը համաձայնություն տալու մասին.
2)Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրի բնակիչներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին.
3)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Պետրոս Լենտրուշի Հայրապետյանին օտարելու մասին.
4)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Արտաշ Գենարոսի Պողոսյանին օտարելու մասին.
5)Մեղրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 06-ի N18 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
6)Մեղրի համայնքի վարչական սահմաններում (Կարճևան բնակավայր) գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված 150.7 քմ մակերեսով շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ---
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ---
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ---
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ---
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ---
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ---
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ---

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2020թ. մարտի 17
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2020 թվական N20

## ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող «Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի վարչական շենքի վերանորոգում» ծրագրի ընդհանուր արժեքի 14%-ի չափով՝ մինչև 958 000 (ինը հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ Մեղրի համայնքի բյուջեից համաֆինանսավորմանը և ապահովել Մեղրի համայնքի և Եվրոպայի խորհրդի միջև պայմանագրի կնքումը:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

| Կողմ (7) | | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|
| ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ | --------- | | |
| ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | --------- | | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ | --------- | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ | --------- | | |
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ | --------- | | |
| ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ | --------- | | |
| ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ | --------- | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2020թ. մարտի 17
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 մարտի 2020 թվական N21

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՆՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Մեղրի համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 280530 (երկու հարյուր ութսուն հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ այլ նպաստներ բյուջեից հոդվածով) Նոնաձոր բնակավայրի բնակիչներին՝ իրենց կողմից փաստացի տիրապետվող հողամասերի գնման հետևանքով առաջացած բեռի թեթևացմանը ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ----------
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ----------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ----------
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ----------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԼՈՒԻԶԵՆ ----------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ----------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2020թ. մարտի 17
ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2020թ.
մարտի 17-ի N21 որոշման

| Հ/Հ | Անուն ազգանուն | Մակերես /հա/ | Օտարման ամիս ամսա | Օտարման արժեք /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Ապրես Կարապետյան | 0,15112 | 10 հունվարի 2020 | 159600 |
| 2 | Արթուր Առաքելյան | 0,26173 | 09 հունվարի 2020 | 120930 |
| 3 | Ընդամենը | 0,41285 | | 280530 |

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2020 թվական N22

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՊԵՏՐՈՍ ԼԵՆՏՐՈՒՇԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Պետրոս Լենտրուշի Հայրապետյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող,Մեղրի քաղաքի Փարամազի փողոցի թիվ 15/50 հասցեում գտնվող 21,1 քառ.մ մակերեսով ավտոտնակը նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00211 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0046-0024, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.02.2020թ. N27022020-09-0012 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Պետրոս Լենտրուշի Հայրապետյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի դ) և ե) ենթակետներով սահմանված գներով.

1)ավտոտնակի համար 10 000 դրամ x 0,086 x 21,1քմ =18 146 (տասնութ հազար մեկ հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ.

2)հողամասի համար՝ 528դրամx21,1քմ=11141(տասնմեկ հազար մեկ հարյուր քառասունմեկ ) ՀՀ դրամ.

3)համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

| Կողմ (6) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ | | |
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | |
| ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ | | |
| ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2020թ. մարտի 17
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2020 թվական N23

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՑՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԱՐՏԱՇ ԳԵՆԱՐՈՍԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Արտաշ Գենարոսի Պողոսյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Ագարակ քաղաքի Չարենցի փողոցի թիվ 40/55 հասցեում գտնվող 149 քառ.մ մակերեսով բնակելի տունը նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,04 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0039-0064, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.02.2020թ. N27022020-09-0034 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Արտաշ Գենարոսի Պողոսյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի ա) և ե) ենթակետներով սահմանված գներով.

1)բնակելի տան համար 30 000 դրամ x 0,069 x 149քմ =308 430 (երեք հարյուր ութ հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամ.

2)հողամասի համար՝ 342 դրամ x 400 քմ =136 800 (մեկ հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր ) ՀՀ դրամ.

3)համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ _____
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ _____
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ _____
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ _____
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ _____
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

2020թ. մարտի 17
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 մարտի 2020 թվական N24

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 06-Ի N 18 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Մեղրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 06-ի «2020 թվականին օտարման կամ օգտագործման տրամադրման ենթակա հողամասերի ցանկը հաստատելու մասին» N18 որոշման հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N1 և N2 հավելվածների:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ---
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ---
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ---
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ---
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ---
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ---
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ---

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2020թ. մարտի 17
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 մարտի 2020 թվական N25

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ (ԿԱՐՃԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 150.7 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 78-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 11-ի N101 որոշումը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (կարճևան բնակավայր) վարչական սահմաններում, «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ. Կարճևան, 4-րդ փողոց թիվ 1/1» հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման 0.04965 հեկտար հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 09-051-0016-0007) առանց հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի կառուցված 150.7 քառ. մետր մակերեսով հասարակական նշանակության շինությունը ճանաչել համայքային սեփականություն՝ որպես մանկապարտեզի շենք:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված անշարժ գույքի պետական գրանցման գործընթացի ավարտից հետո.
2.1 անշարժ գույքը ներառել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկում.
2.2 անշարժ գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին՝ Կարճևանի մասնաճյուղի գործունեությունը իրականացնելու համար:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ _____
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ _____
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ _____
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ _____
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ _____
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2020թ. մարտի 17
ք. Մեղրի